Գերայարգեցելոյ և վսեմազունի տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

Ցիսուսանդ ողջունիւ ծանիր, զի սոյն եկեղեցիս հազիւ եզերի ժն ո [15000] փորինթով, սոքա ունին յա [2000]. փորինթ, ո [1000] փորինթ թէ ևս աճ[ե]մներն որ տալոյ լինին, կամ հազարհինգհարիւր մեծ բան է, յէրլիյիցն սակաւ օգնութիւն լինի, զի ի զարնան գանքտելոց և աւերելոց են զընակութիւնս նոցա վասն մերձ գոլոյ ներքնաբերդին, և ի սոցանէ 5 մարդ հազիւ կարէ աղքատօրէն զբնակութիւն ինչ շինել վասն ինքեանց. տան քիրան ևս խիստ թանկ է, և ոչ ունին զկարողութիւն ինչ օգնելոյ, թէ և ոմանք ի սոցանէ օգնել կարիցեն, կարի սակաւ լինի։ Ուստի մտածելով զայս ոմանց յառաջազայից աճ[ե]մներուն, այսինքն պարոն Ցովանէ, Կիւլեազին, ճանազիզին և այլոց ոմանց, խորհուրդ արարեալ են ներ ինքեանց, թէ ես ի դիմաց նոցին գրիցեմ առ քեզ, այսինքն զերկուս խնդիրս, որոց մինն է այս, զի դու այդր գրիցես առ սուրբ ժողովն, զի նոքա գրիցեն առ կայսրն և կամ առ այլ ոք, զի ինքեանք ևս օգնիցեն վասն շինման եկեղեցւոյս մերոյ, շնորհելով զիւս նիւթեղէնս, այսինքն թուվլայ և քիրէճ, զի ասա առատապէս զտանի այսպիսի նիւթք թագաւորական, և այսպիսի խնդիրքս կարծեմ ոչ է դէմ սրբոյ ժողովոյն, նաև թագաւորին, զի ասա ոմանց վանորէից շնորհեաց զայսպիսի նիւթս. ոմանց ի սոցունց ըստ մասին և ոմանց. ըստ բոլորին։ Արդ և իմ մտածելով զսոյնս թերևս վասն սրբոյ ժողովոյն մեզ ևս շնորհիցեն, որպէս շնորհեաց այլոց կարգաւորաց։ Երկրորդ խնդիր սոցին է այս, որ է կարի խելագառական, նաև ըստ ինքեան է անկարելի, որ է այս, զի սոքա խնդրեն ի քէն, թէ դու այդր վասն սոյնոյ եկեղեցւոյս զոմանս զոմանս դրամս հաւաքիցես այդր եղեալ ի մեծամեծաց. և չուրջ զայսու ոչ է պարտ աստէն երկարել, զի է եզական խնդիր։ Կարի նեղութեան մէջ եմ, նաև տկար, վասն շինման սոյնոյ եկեղեցւոյս, զի յառաջակայք գոլով դրամասէրք և զաղջք, նաև անհամաձայնք ցրտապէս շարժին, և մանաւանդ երեցփոխանն որ է բարկացող և կամապաշտ։ Մինաս վ. եղև քանոնիկ Թմշվարու, միջնորդութեամբ Թմշվարու ճէնռալին, 600 փորենտ ի տարւոջն բաց ի պատարագէն, նաև յայլոց եկամտից եկեղեցականաց, և այժմ ի վէնա երկոքումբք սպասաւորօք շրջի . . . . լէհացիք առաքեալ են ի ստամպօլ զմի դեսպան, խոստանալով տալ նոցա զզամանիցան, որպէս զի այնու օգնիցէ ինքեանց։ Մեծագոյն խռովութիւն գոյ ի միջի սոցա։ Կայսրն առ սոսա դեսպան յղեաց ասելով թէ զո ոք ի ձէնջ կամիցիք թագաւորեցուցանել՝ ինձ հաճոյ է բաց ի յիստանիսլավէն, սոյն զունակ մօսկօֆուն էլչին ասացեալ է, նա և ինկիլիզին և ֆուչէմէնկին և պուռանտէպուռքին, և զարտինալն որ է բերան մեծամեծաց լեհացւոց՝ իւրաքանչիւրոյ դեսպանաց պատասխանեալ է ասելով, թէ դուք չունիք իրաւունք առ այս ներախարնել զձեզ, զի դուք ի վերայ թագաւորութեանց ձերոց կարէք իշխել և ոչ ի վերայ մեր, զի զորն հաճիմք և զնոյնն ընտրեմք մեզ թագաւոր։ Եւ ներ դեսպանացս այսոցիկ առաւել զայրացեալ է պրռանտէբուռքին դեսպանն և հարկանեալ զսուրն իւր ի վերայ սեղանին, և նա հեգնելով սկսեալ է ուշաթափիլ առաջի դեսպանին և ասէ զի լինի թէ առանց փասափոռթի գնաս. և դեսպանն ասէ[«]ես փասափօող ոչ առնում, ինձ ոչ է պիտոյ[»], բայց զկնի սակաւուց պիտոյանայ քեզ և այլն։ Սոքա կամէին զընտրումն թագաւորին իւրեանց երկարացուցանել, սակայն զօրքն մոսկոֆու, զօրքն կայսերն, զօրքն սակսոնին և պռանդէպուռքին, ոյք այժմ են ի լեհաստան՝ ստիպեն զսոսա շուտով կացուցանել, և եթէ լէհացիք ընդդէմ կամաց սոցին առնիցեն, յայնժամ սոքա տիրելոց են բռամբ ի քաղաքս նոցին։ Թէպէտ սոքա նախապէս ունէին զսոյն խորհուրդս։ Նալըրանին որդին 8 միլիօն դրամ պահանջէ ի լէհացւոց, և ասէ թէ հայր իմ տուեալ է ձեզ այսքան դրամ։ Ցետ երկուց և երից աւուրց յայտնի կու լինի, թէ ով եղեալ իցէ թագաւոր...։ Պրռանտէպուրքն 4000 մարդով ինքն գնացեալ